ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍՔԸ

ԼՂԻՄ-ի ծանր վիճակը, Հայաստանի տնտեսական շրջափակումը Ադրբեջանի կողմից իրավացի զայրույթ են առաջացրել հանրապետության աշխատավորների մեջ: Բոլորի պահանջը մեկն է՝ արդարացիորեն լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը. Հայաստանը ազատել «ինտերնացիոնալ» հարևանների շրջափակումից, հատուցել այն բոլոր վնասները, որոնք առաջացել են անօրեն շրջափակման հետևանքով, ամենայն խստությամբ պատժել մեղավորներին և նրանց հովանավորողներին: Այս պահանջն են պաշտպանում նաև Կ. Ցետկինի անվան կարի ա/մ գլխամասային ֆաբրիկայի բանվորները:

ԱՐՈՒՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ— Վերակառուցումն ու հրապարակայնությունը մեզ իրավունք են տվել ազատ արտահայտվելու: Կասեմ հետևյալը. երկրի ղեկավարության անվճռականության հետևանքն են Լեռնային Ղարաբաղի օրըստօրե ծանրացող վիճակն ու Հայաստանի տնտեսական շրջափակումը հարևան Ադրբեջանի կողմից:

ԱՎԱՐԴ ՍԱՐԳՍՅԱՆ— Այո, ճիշտ է, Ադրբեջանի «ինտերնացիոնալիստները» իրենց ղեկավարների ու մտավորականության հովանավորությամբ դժվար թե դիմեին նման անօրեն, հակամարդկային քայլի, եթե սկզբից վճռական միջոցներ ձեռնարկվեին Սումգայիթի ցեղասպան ոճրագործների նկատմամբ, եթե հարցերին տրվեին հստակ պատասխաններ:

ՍԵԴԱ ՕՀԱՆՅԱՆ— Ես ծանրագույն հանցանք եմ համարում այն ամենը, ինչ կատված է Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցների արդարացի իրավունքների ոտնահարման, մեր հանրապետության տնտեսական շրջափակման հետ: Համոզված եմ, կգա հարցի արդարացի լուծման ժամանակը: Ձինվենք համբերությամբ, լավատեսությամբ, բայց չկորցնենք մեր զգոնությունը:

Լուսանկարները՝ Ժ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ